ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

# ՀՐԱՄԱՆ

N 20-Ն

30 հունվարի 2026թ.

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանք-ների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/23 | 48 | փիչերանոթ | 85000 | ԱՁ Ռիտա Գասպարյան | 25421169 | ք. Երևան, Նանսենի փող. 1Ա շենք բն 28 | 20.01.2026թ. | «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ | «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | * |

* *Համաձայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2025թ. թիվ 2/2 որոշման ի թիվս այլ մասնակիցների ընտրված մասնակից է ճանաչվել նաև ԱՁ Ռիտա Գասպարյանը՝ 48-րդ չափաբաժնի մասով:*

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով 12.01.2026 թվականին վերոնշյալ մասնակցին www.armeps.am/eaction համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ:

16.01.2026 թվականին ԱՁ Ռիտա Գասպարյանի կողմից ստորագրվել և Համակարգ է բեռնվել պայմանագիր, սակայն վերջինիս կողմից կցվել է փոփոխված պայմանագիր՝ Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված պայմանագրի նախագծի նկատմամբ, առանց Պատվիրատուին տեղեկացնելու և համաձայնեցնելու: Մասնավորապես պայմանագրի մատակարարման ժամանակացույցում /Հավելված N 2/ ապրանքի մատակարարման ժամկետը սյունակում առկա «3 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել են «7 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

19.01.2026 թվականին Համակարգի միջոցով ԱՁ Ռիտա Գասպարյանին ծանուցվել է, որ, համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ միայն կողմերի համաձայնությամբ, և առաջարկվել է սահմանված ժամկետում, ներկայացնել ստորագրված պայմանագիրը՝ Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված պայմանագրի նախագծին համապատասխան:

ԱՁ Ռիտա Գասպարյանի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, չի ներկայացվել Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված նախագծին համապատասխանող պայմանագիր:

ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Ղազարյան
Գնումները համակարգող
Հեռ. /010/ 20 50 50 /218/